կանոնների սահմանումը և այդ ամենը երիտասարդ սերնդի գիտակցությանը հասցնելու նոր ուղիների մշակումը:

Բանալի բառեր. հայրենասիրություն, քաղաքացիություն, արժեք, դիրքորոշում, դաստիարակություն, ծառայություն, բանակ, հայրենիք, թշնամի, պետություն, երիտասարդություն:

Гоар Мкоян. Сюзанна Егиазарян

ПРОЯВЛЕНИЯ ПАТРИОТИЗМА В СРЕДЕ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ

Историческим источником патриотизма является выживание отдельных наций в определенной местности на протяжении веков и тысячелетий, в результате чего формируется связь с родной землей, языком и традициями. В условиях формирования наций и создания национальных государств патриотизм становится составляющей общественного сознания. Понятия «гражданственность» и «патриотизм» тесно переплетаются: оба описывают взаимосвязь между индивидом, обществом и государством.

Отметим, что в последние десятилетия, прошедшие после обретения Республикой Армения независимости, в среде современной молодежи отмечаются разногласия и противоречия в толковании понятий гражданства и патриотизма, чем и было обусловлено проведение двух социологических опросов: количественного и качественного. Анализ результатов количественного исследования дает возможность представить отношение респондентов к взаимоотношениям НКР-Армения-Азербайджан, а также место и роль ценностей армии-государства-служения-родины среди представителей двух поколений армянского общества, а результаты качественного исследования (экспертного опроса) – основные характеристики и варианты толкования патриотизма. Опираясь на результаты опроса, мы находим, что для повышения духовного, интеллектуального и физического потенциала нации необходимо переосмысление патриотизма среди молодежи, и считаем важным определение четкой и ясной системы моральных ценностей и проистекающих из нее правил поведения и развитие новых путей доведения всего этого до сознания молодого поколения.

Ключевые слова: патриотизм, гражданственность, ценность, ориентация, воспитание, служение, армия, родина, враг, государство, молодежь.

Gohar Mkoyan (Republic of Armenia, Yerevan) –
Sociology PhD in Sciences, lecturer of the Chair of Sociology and Social Work,
Armenian State Pedagogical University. Kh. Abovyan

Syuzaana Yeghiazaryan (Republic of Armenia, Yerevan) –
lecturer of the Chair of Sociology and Social Work,
Armenian State Pedagogical University. Kh. Abovyan

DEMONSTRATION OF PATRIOTISM AMONG MODERN ARMENIAN YOUTH

The historical source of patriotism over the centuries and millennia is the survival of individual nations in some places as a result of which tendency is formed to native land, language and traditions. With the formation of nations and creation of national states, patriotism becomes an integral part of social consciousness. The concepts of citizenship and patriotism are closely interconnected and describe the relationship between an individual, society and the state.

It should be noted that during the last decades in the years following the independence of the Republic of Armenia there have been noted differences ancd contradictions between interpretation of the concepts of patriotism and citizenship causing two sociological surveys to be implemented quantitative and qualitative. The analysis of the results of the quantitative research gives an opportunity to present the survey participants' attitude towards the NKR-Armenia-Azerbaijan relations, as well as the place and role of army-state-service-motherland values among the representatives of the two generations of the Armenian society,

and the results of qualitative research (expertise) presents the key characteristics of pas well as the place and role of army-state-service-motherland values among the representatives of the two generations of the Armenian society, and the results of qualitative research (expertise), patriotism key characteristics and interpretation of patriotism and its interpretation options. Based on the results of the survey, we find that in order to raise the spiritual, intellectual and physical potential of the nation it is necessary to reinforce patriotism among young people and highlight the clear moral values system and the rules of behavior that derives from it and the development of new ways to bring this all to the consciousness of the younger generation.

Keywords: patriotism, human rights and citizenship, civil and patriotic position, patriotic education.

Քաղաքակիրթ հասարակության պայմաններում անհատի կենսական դիրքորոշման կարևորագույն ասպեկտներն են քաղաքացիությունը և հայրենասիրությունը: Այսպես, օրինակ, քաղաքացիությունը սովորաբար մեկնաբանում են երեք տեսանկյունից՝ որպես անհատի ինքնության ձև, որպես քաղաքական դիրքորոշման արտահայտում և որպես անհատի և հասարակության որակական վիճակ: [1]

Քաղաքացիությունը քաղաքացիական հասարակության անքակտելի տարրն է: Իր հերթին, հայրենասիրությունը դիտվում է որպես սեռ առ հայրենիք, դեպի նրա բարեկեցություն և բարգավաճում:

«Քաղաքացիություն» և «հայրենասիրություն» հասկացությունները սերտ փոխկապված են. երկուսն էլ բնութագրում են անհատի, հասարակության և պետության փոխադարձ կապը: Որոշ իմաստով «հայրենասիրություն» կատեգորիան արտահայտում է անհատի կողմից պետության նկատմամբ հուզա-հոգեբանական վերաբերմունքը, որն, իր հերթին, դրսևորվում է խորհրդանշանական ձևով: Այս իմաստով հայրենասիրությունը վերացարկվում է ավանդական սոցիոմշակութային արժեքներից՝ հանդես գալով որպես առանձին, ուրույն պատմա- և սոցիոմշակութային գաղափար և կոնցեպտ:

Հայրենասիրությունը Գ. Նժդեհի կարծիքով առաքինությունների թագն ու պսկան է: Սակայն ի տարբերություն «հայրենասիրության» ազգայնամոլական մեկնաբանությունների՝ Գ. Նժդեհի համար հայրենասիրական, ազգասիրական զգացումներն ու գիտակցությունը չեն կարող իրենց հիմքում ունենալ այլատյացությունը կամ ատելությունն առ օտարները: Նա գտնում է, որ այն զարգանում է աստիճանաբար: Իսկական հայրենասիրությունը խարսխված է սեփական մշակույթի համամարդկային գծերի ճանաչման, ազգի, պատմության լուսավոր էջերի վերապրման վրա»: Նա նշում է. «Հայ մարդ, կասկածելի է հայրենասիրությունդ, եթե գոյությանդ իմաստն ու դրոշակը հայրենիքդ չէ» և «Իմ հայրենիքը,-գրում է Գ.Նժդեհը,-մարդկայնորեն այն լավագույն է, որ կա Հայաստանում[2]:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը՝ բնույթով որպես խորապես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսակայունության բնութագրիչ: Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը:

Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրենասիրության վերածնունդը: Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է

[1] Айвазян А. А. Гражданственность и гражданское участие: теоретико-методологический анализ. Екатеринбург, 2001, С.19.

[2] Գ. Նժդեհ Մեծ Գաղափարներ. Երևան, 2003, էջ 52.

սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

Եթե աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրներում ժողովուրդները վաղուց իրենց համար պարզել են՝ որն է հայրենիքը ու ինչն է հայրենասիրությունը, մեր հազարամյա երկրում դեռ շատերը այդ հարցի պատասխանը հստակ չգիտեն, և ավելին, մեր երկրի բազում խնդիրները ինչպես նախկինում, այնպես էլ այժմ այս կամ այն կերպ կապված են հայրենասիրության սխալ ընկալման հետ:

Հայրենասիրության մասին պատկերացումները կապված են հայրենիքի նկատմամբ սիրո հետ, սակայն հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումները տարբեր մարդկանց մոտ տարբեր են: Այլ անձանց վերագրելով հայրենասիրական զգացմունքներ, իսկ որոշ իրադարձությունների տալով հայրենասիրական նրբերանգ՝ բնութագրող անձը դրանով հաճախ տալիս է դրական գնահատական:[1]

Հայրենասիրության դրսևորման ուղիների, հայրենաասիրության նկատմամաբ երևանաբնակների մոտ առկա վերաբերմունքը պարզելու նպատակով այսօրվա (18-30) և ԽՍՀՄ երիտասարդների (55-66), ինչպես նաև փորձագետների շրջանում տրվել է հետևյալ հարցը. «ի՞նչ է հայրենասիրությունը, և ի՞նչն է այդքան խորհրդավոր նրանում»:

Հետազոտության ընթացքում հնչած պատասխանները տարբեր էին և հակասական: Օրինակ՝ հայրենասիրությունը, ըստ ավագ փորձագետների, բարոյական և դիվանագիտական սկզբունք է, հասարակական զգացողություն, որի իմաստը սերն է հայրենիքի նկատմամբ և պատրաստություն ստորադասել նրա համար սեփական շահերը: Հարցման մասնակից երիտասարդների կարծիքով՝ հայրենասիրությունն ենթադրում է հպարտություն Հայրենիքի նվաճումների հանդեպ, ազգային շահերի պաշտպանում, կապվածություն սեփական հողին, սեր դեպի հայրենիքի մշակույթը և սեփական լեզուն, իսկ երիտասարդ փորձագետների կարծիքով՝ հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշների համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը՝ հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության ամբողջությունն է: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ «հայրենասիրություն» ասելով, սակայն, առօրէական կյանքում, ինչպես նշեցին մի խումբ փորձագետներ շատ հաճախ, հայրենասիրություն ասելով, հասկանում են սեր դեպի հայրենիք, սակայն գիտական մեկնաբանություններում հայրենասիրության նման ընկալումը ընդունելի չէ: Հետևապես այն պետք է դիտարկել՝ որպես սուբյեկտի հայրենիքի հետ փախհարաբերվելու արժեք, որը բնութագրում է ծննդավայրի կամ բնակության վայրի հետ կապվածություն, ներգրավվածություն կոնկրետ մշակույթային արժեքներում, որոնք ընկալվում են՝ որպես «սեփական» ունենալով հայրենիքի ներկայի և ապագայի հանդեպ պատասխանատվության զգացում: Իսկ մյուս խումբը նշեց, որ հայրենսիրությունը հանդիսանում է ազգային ինքնության արժեքային հիմքը՝ որպես քաղաքական և մշակութային մեծ պաշար ունեցող ազգի ինքնիշխանություն, որը, հիմնված լինելով ազգային շահերի վրա, գործում է ի օգուտ պետության:

Հարցման ընթացքում հետաքրքրական էր պարզել, թե հարցման մասնակից փորձագետները ինչպիսի հատկանիշներով կամ բառակապակցություններով են բնորոշում հայրենասիրությունը.

Հայրենասիրությունը՝սերն է դեպի Հայրենիք, նվիրվածությունը պետությանը, բարոյական և քաղաքական սկզբունք է, սոցիալական զգացում, որի բովանդակությունը հայրենիքի հանդեպ ունեցած սերն է, անցյալի և ներկայի հանդեպ ունեցած հպարտությունը, պատրաստակամությունը իրենց շահերը ենթարկել երկրի շահերին, ցանկություն պաշտպանել հայրենիքի շահերը, երկրի պատմական և ժամանակակից նվաճումների մասին գիտելիքներ առկայությունն է, հոգևոր-բարոյական արժեքների ճանաչումը, քաղաքացիական դիրքորոշման դրսևորումը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեություններում ակտիվ

[1] Айвазян А.А Гражданское общество и средний класс .Челябинск, 2001, С. 110 – 148.

մասնակցության ապահովումը, սեփական դիրքորոշումների ձևավորումը և արտահայտումը, իշխանությունների կառուցողական քննադատության ապահովումը և այլն:

Այսինքն կարող ենք նշել, որ հայրենասիրությունը ժողովրդի ոգին է, որի նպատակն է ստեղծել, պահպանել ազգը և պաշտպանել երկիրը:

Այնուհետև ձևավորվում են տարակարծություններ հետևյալ հարցերի շուրջ՝ արդյո՞ք վերոնշյալ հասկացությունները փոխպայմանավորում են միմյանց, այսինքն, հնարավոր է լինել քաղաքացի՝ չլինելով հայրենասեր կամ ընդհակառակը, և որն է ավելի կարևոր գաղափար՝ հայրենասիրությու՞նը, թե՞ քաղաքացիությունը:

Այս հարցերին պատասխանելու համար մենք ելնում ենք նրանից, որ ինքնին հարցադրումն արդեն ենթադրում է հայրենասիրություն-քաղաքացիություն հակադրության ծագում, որը գալիս է արդարացնելու անհատի ինդիվիդուալիզմը և եսակենտրոնությունը, ում իրավունքները և ազատությունները գերակա են սոցիումի նկատմամբ և ավելին, կախված չեն նրա ընթացիկ վիճակից: Սակայն իրականում մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները կարող են իրացվել որոշակի պետության պայմաններում՝ որոշակի պատմամշակութային ավանդույթների գերակայության ներքո, և եթե այդ պետությունն ինքնիշխան չէ, ապա անհատի քաղաքացիության հարցը մնում է չլուծված:

Հարկ է նշել, որ քաղաքացիությունը և հայրենասիրությունը անհատին ի ծնե բնորոշ որակներ չեն. դրանք ձևավորվում են վերջինիս դաստիարակության և ինքնազարգացման ընթացքում: Ընդ որում, այս դեպքում հսկայական նշանակություն է ձեռք բերում հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական վիճակը. հենց դա է պետք հաշվի առնել քաղաքացիության և հայրենասիրության գաղափարների ձևավորման և զարգացման ժամանակ:

Հայրենասեր քաղաքացին որդեգրում է իր հասարակությանն ու պետությանը բնորոշ արժեքային համակարգը, քաղաքացիական-հայրենասիրական մտածողությունն ու գաղափարները՝ դրանք դարձնելով իր սեփական համոզմունքների հիմքը:

1990-ական թթ. հասարակական-քաղաքական ճգնաժամի պատճառներից մեկը քաղաքացիության և հայրենասիրության գաղափարների՝ որպես հասարակական զարգացման նմուշների, արժեզրկումն էր: Ժամանակակից հայ հասարակությունն ապրում է արժեքային փոխակերպման փուլ, որը փոխում է նրա քաղաքական, տնտեսական, բարոյական, վարքաբանական և անգամ կենցաղային բնութագիրը: Միաժամանակ տեղի է ունենում առկա պետական կարգի ապակազմակերպում, գոյություն ունեցող հոգևոր-բարոյական կողմնորոշիչների արժեզրկում, առաջ է գալիս սոցիալական լարվածություն և այլն:

Ավելին, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հայկական պետականության կայացման ճանապարհին տեղի են ունենում սոցիոմշակութային արժեքների փոխակերպումներ: Այս խնդիրը բարդանում է տնտեսության, մշակույթի, և, առհասարակ, հասարակական կյանքի շարունակական ճգնաժամի պայմաններում, և այս պարագայում հայրենասիրությունը՝ որպես սոցիոմշակութային կոնցեպտ, վերաիմաստավորվում է՝ ձեռք բերելով ինչպես նոր դեր, այնպես էլ որակապես նոր բովանդակություն:

Նոր արժեքային կողմնորոշումների ձևավորումը բավականին բարդ գործընթաց է, որն ուղեկցվում է հին և նոր կողմնորոշիչների բախմամբ և նորանոր հակասությունների առաջացմամբ: Անցումային շրջանի հակասականությունը պայմանավորված է ինչպես էթնոմշակութային, այնպես էլ քաղաքական գործոններով /ազգային առանձնահատկություններ, Ղարաբաղյան կոնֆլիկտ, «Հայ դատ», ռազմաքաղաքական դրություն և այլն/:[1]

Որպեսզի կարողանանք հետազոտության միջոցով հայ երիտասարդների շրջանում ազգային առանձնահատկությունները, Ղարաբաղյան կոնֆլիկտի հանդեպ վերաբերմունքը, հայրենասիրության դրսևորման ձևերը ուսումնասիրել և նկարագրել՝ տրամադրել ենք հարցման մասնակիցներին մի շարք դատողություններ, որոնք հնարավորություն են տալիս պարզելու, թե ինչքանով են այսօր կարևորվում բանակը, պետությունը, ծառայությունը և այլ արժեքները:

Նշենք, որ հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կարող ենք փաստել, որ հայ հասարակության երկու սերնդի ներկայացուցիչների մոտ կարևորվում են նշված բարոյական

[1] Вишневский Ю.Р. Шапко В.Т. Социология молодежи. Екатеринбург, 2006

արժեքները: Եվ արդյունքների համաձայն այսօր յուրաքանչյուր հայ ընտանիք գիտակցում է թշնամու կողմից հնարավոր վտանգները, հաջորդ սերունդներին փոխանցում համապատասխան գիտելիքներ և հմտություններ: «Բանակն ու զինվորական ծառայությունը» կարևորում և գիտակցում է յուրաքանչյուր հայ մարդ, որի վառ ապացույցն է Ապրիլյան քառօրյա պատերազմը, որի ժամանակ հայ հասարակությունը ամբողջ աշխարհի առջև ի ցույց դրեց իր հայրենասիրությունն ու ոգու ուժը: Բացի այդ, Արցախի ժողովրդի նվաճած անկախությունը վերացնելու նպատակով արցախահայության դեմ Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած ռազմական ագրեսիայի արդյունքում հայ-ադրբեջանական զինված առճակատման խնդիրը դարձավ միջազգային կառույցների, համաշխարհային հանրության հոգածության առարկան: Փոխվեցին պետականության և պետականաշինության մասին հասարակական ընկալումները՝ ստիպելով վերաիմաստավորել մեր գործունեությունը պետական, քաղաքական, հասարակական և այլ մակարդակներում՝ ինչպես ենք երկիր կառուցել և ինչպես պետք է անենք դա ապագա մարտահրավերներին ավելի պատրաստված կերպով դիմագրավելու համար: *Ինչպես նշեցին իրենց խոսքում փորձագետները. «Քառօրյա պատերազմն ավելի բյուրեղացրեց իրավիճակը՝ ամրապնդելով այն համոզմունքը, որ ԼՂ ժողովրդի ազատ և անկախ ապրելու իրավունքն անքննելի է և հնարավոր է պաշտպանել այդ իրավունքը՝ հույսը դնելով միայն սեփական ուժի վրա: Այսօրվա հայ զինվորը պաշտպանում է ոչ միայն հայրենիքի սահմանները այլ առաջին հերթին՝ ազատ, իր անկախ ապրելու և ինքնորոշվելու արցախցու իրավունքը»:*

Ինչ վերաբերվում է մեր քաղաքացիների Ադրբեջանի և առհասարակ «թշնամու» կերպարի նկատմամբ առկա վերաբերմունքին (տես.՝ աղյուսակ N 2),ապա հարցման մասնակից երիտասարդների 55,9%-ը իսկ ավագ սերնդի ներկայացուցիչների՝ 34,8 %-ը նշել են, որ «չնայած քաղաքակրթության զարգացմանը, թուրքը մնում է թուրք»: Իսկ այն դատողությանը, թե համաձա՞յն եք, որ Հայաստանը ազատագրված տարածքները վերադարձնենք Ադրբեջանին, հարցման մասնակից երիտասարդների 69,5%, իսկ ավագ սերնդի ներկայացուցիչների 58,7%-ը պատասխանել են, որ ոչ, ավելին՝ ժողովուրդը պետք է զենքը ձեռքին դիմակայի նման որոշմանը, ինչը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ հայը գիտակցում է թշնամու ով լինելը, և պատրաստ է մարտնչել, ավելին, գրավել հակառակորդի տարածքները:

Աղյուսակ N 2. Դատողություններ (Բանակ, ծառայություն, հարևաններ …) (Տարիք, %)

№ ՀԱՐՑԵՐ		Ոչ		Ավելի շորտ ոչ		Ավելի շուտ այո		Այո		Ընդ հանուր	
	Տարիք	8-30	5-66	8-30	5-66	8-30	5-66	8-30	5-66	8-30	5-66
	Եթե հզոր տերությունները պնդեն, որ Հայաստանը ազատագրված տարածքները վերադարձնել Ադրբեջանին, ապա ժողովուրդը զենքը ձեռքին պետք է դեմ դուրս գա այդ որոշմանը:	.8%	3.9%	.1%	.4%	8.6%	3.0%	9.5%	8.7%	00 %	00 %
	Ծառայությունը հայկական բանակում հիասթափեցնում է երիտասարդներին	0.3%	.5%	3.6%	4.8%	9.0%	7.4%	7.1%	1.3%	00 %	00 %

	:										
	Բանակում ծառայելը պարտադիր է յուրաքանչյուր առողջ հայ երիտասարդի համար	4.0%	.2%	6.9%	9.1%	6.4%	8.3%	2.3%	0.4%	00 %	00 %
	Հայաստանն ունի այնպիսի հարևաններ, որ նույնիկս կանայք նույնպես պետք է կարողանան զենք կիրառել:	8.8%	5.3%	5.4%	3.9%	5.8%	4.3%	0.0%	.5%	00 %	00 %

Բացի այդ, երկու տարիքային խմբերի ներկայացուցիչների կարծիքով քաղաքական նախապատվությունները պարզելու համար տրամադրվել է հետևյալ դատողությունը՝ «պետությունը ինձ հետաքրքրում է այնքանով, որքանով այն ծառայում է իմ նախապատվություններին». միանշանակ համամիտ են երիտասարդների 6,5%-ը, իսկ ավագ սերնդի ներկայացուցիչների՝ 4,3%-ը:

Ըստ երիտասարդների 26,9%-ի, պետության հիմնական դերակատարությունը հասարակության ամբողջականության ապահովումն է. ուշագրավ է, որ այս կարծիքին են ավագ սերնդի ներկայացուցիչների միայն 19,4 %-ը: Ըստ երիտասարդների 5,4 %-ի և ավագ սերնդի 4,3 %-ի, պետությունն ապահովում է ժողովրդավարական սկզբունքների և նորմերի իրացումը[1]:

Վերոնշյալը թույլ է տալիս վկայելու, որ երիտասարդությունը ավելի շատ է կարևորում պետության դերակատարությունը՝ որպես կարգավորիչ, նորմատիվային ուժ և որպես որոշակի կենսակերպ և պատշաճ արժեքային համակարգ թելադրող:

Շատերը գտնում են, որ հայ հասարակությունում ժամանակակից երիտասարդների շրջանում հայրենիքի նկատմամբ սերը պակասել է, կամ հայրենասերներ չեն, սակայն հետազոտության արդյունքները փաստում են մի փոքր հակառակը, որ ոչ միայն երիտասարդները, այլ նաև նրանց շրջապատող ընկերները, ընտանիքները պատրաստակամ են մարտնչել, պայքարել հայրենիքի ազատության, անկախության համար:

Նաև նշենք հետաքրքրական փաստ, որ և երիտասարդ, և ավագ փորձագետների կարծիքով, հայրենասիրական, ազգային արժեքների պահպանման գիտակցության դաստիարակության գործում պետք է կարևորել հայ կնոջը, քանի որ նա է ապահովում հոգեփոխման գործընթացը: Ինչպես նաև մտավորականության դերը, ով, լինելով բարձր հատկանիշների կրողը, պետք է օրինակ ծառայի երիտասարդության համար: Քանի որ երիտասարդներն են երկրի ապագան իրենց ուսերին կրողը, ուստի նրա մեջ պետք է սերմանել ազգայինը, կրթել այն կենսափորձով, որ թողել են մեզ մեր հերոսական պատմությունը կերտող նախնիները, քանզի այդ է պահանջում ժամանակը, տիրող իրականությունը և միակ ելքն է դիմակայելու փոքր պետությունների համար արհավիրք հանդիսացող գլոբալացման, ինտեգրման գործընթացները՝ պահպանելով ազգային, բարոյական արժեքները:

Պետությունը պարտավոր է իր վարած քաղաքականությամբ, իր քարոզած գաղափարներով նոր սերնդի մեջ արթնացնել ազգային հպարտության զգացումը, հույսով և հավատով լցնել հայրենիքի լուսավոր ապագայի նկատմամբ, իսկ դպրոցը՝ երիտասարդ սերնդի դաստիարակության, կրթության գործընթացը լավագույնս կազմակերպեու համար, պետք է ապահովվի հետևյալ պայմանները. նպատակի և ծրագրի առկայություն, դասավանդման հստակ մշակված համակարգ, կարողանա ձևավորել հայրենասիրական մթնոլորտ, ունենա ազգային

[1] Мкоян Г.С. Социокультурные ценности в современном армянском обществе: межпоколенный анализ// https://disser.spbu.ru/files/disser2/1161/disser/1Ds995VB5F.pdf (дата обращения: 20.02.2018)

գիտակցության ձևավորմանը նպաստող աշխատանքներ կազմակերպելու կարողություններ, առարկայի մատուցման ստեղծագործական, զգացմունքային եղանակներ:

Բացի այդ, հարկավոր է սահմանել բարոյական արժեքների հստակ համակարգ և դրանից բխող վարքի կանոներ և այդ ամենը դաստիարակել երիտասարդ սերնդի մոտ, հոգեպես վերափոխել նրան: Նոր սերունդի դերը ազգակառուցման գործում կարևոր է, քանի որ նոր սերունդը միշտ էլ ենթադրում է նոր աշխարհայեցողություն, նոր մթնոլորտ, նոր կամք, և ձգտում գնալ մեկ քայլ առաջ, քան նախորդ սերունդներ, նույնիսկ գերազանցելով ինքն իրեն: Իսկ որակապես նորը՝ նրա արժեքային առավելությունն է հնի նկատմամբ :

Գրականություն

1. Գ. Նժդեհ Մեծ Գաղափարներ. Երևան, 2003, 147 էջ:
2. Айвазян А. А. Гражданственность и гражданское участие: теоретико-методологический анализ. Екатеринбург, 2001.
3. Айвазян А.А. Гражданская культура человека: методологический анализ// Гражданственность и патриотизм в XXI веке: теория и практика. Екатеринбург. 2002.
4. Айвазян А.А. Гражданское общество и средний класс. Челябинск, 2001.
5. Вишневский Ю.Р. Шапко В.Т., Социология молодежи. Екатеринбург, 2006.
6. Молодой человек в условиях кризиса. Материалы междунар. науч.-практ. конф. 28–30 июня, 1994 г.
7. Мкоян Г.С. Социокультурные ценности в современном армянском обществе: межпоколенный анализ.СПб, 2017, 233с. // https://disser.spbu.ru/files/disser2/1161/disser/1Ds995VB5F.pdf (дата обращения: 20.02.2018)